

Մ. ԳԵՐՇԵՆԶՈՆ



ԼԵՆԻՆ ՄԱՐԷ

891.715

Գ.52

ՊԵՏԼՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ 1934

891-718

9-52

Ա. ԳԵՐՇԵՆԶՈՆ

56 NOV 2011

891-54-3



ԼԵՆՆԻ ՍԱՐԸ

Թարգմ. և ուսուցիչից՝ ԱՆՆԱ ՔԱԼԱՆԺԱՐ



ՊԵՏՏՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ



43284-63

Պատ. խմբ. Ա. Հայրյան, լեզվ. խմբագիր
Հովհ. Ստեփանյան, տեխ. խմբագիր Տ.
Խաչվանդյան, սրբագրիչ Հ. Սաֆիկյան
Քլավիրա 8416 (բ), հրատ. 2839,
պատվեր 170, տիրաժ 3000
Հանձնված է արտադրության 28 հուն-
վարի 1934. ստորագրված է ապրիլի 15
մարտի 1934 թ.

ԻՆՆԸ ԿԻԼՈՄԵՏՐ

Իննը կիլոմետր — դա շատ-շատ է: Յեթե վոտով անցնես դրա կեսը՝ և՛ կհոգնես, և՛ ուտել կուզենաս: Յեթե լավ հանգստանաս, կկարողանաս առաջ դնալ:

Յեթե վերցնես մետրը, վորով չիթ են չափում, և սկսես նրա-նով չափել այդ ճանապարհը, յերբեք չես վերջացնիլ:

Լավ կլինեիր ունենալ այնպիսի քանոն, վորը լինեիր վոչ թե մի մետր յերկարության, այլ հազար մետր—ամբողջ մի կիլոմետր: Այդպիսի քանոնով կչափեյիր այդ ճանապարհն ինն անգամ և ահա քեզ իննը կիլոմետր:

Իսկ յեթե իննը այդպիսի քանոն կապեյինք իրար, հապա ինչ-պիսի քանոն կլինեիր:

Յեթե այդպիսի քանոնի մի ծայրը դնեյինք գետնին, իսկ մյուսն՝ ուղղեյինք յերկինք, կանցներ ամպերի միջով դեպի վեր:

Յեթե ամպերից անձրև տեղար, քանոնի վերին ծայրը ցցված կլինեիր ամպերից վեր և կփայլեր արևի տակ:

Դե, իհարկե, այդպիսի քանոն չի լինում:

ՍՍՐԵՐ

Սակայն աշխարհում կան այդպիսի բարձր սարեր:

Դրանց գագաթները յերևում են շատ հեռվից, հարյուր կիլոմետրի վրա:

Յեթե այդպիսի սարի վերևից քար պոկվի, նա կզլորվի շատ հեռու, մինչև վոր կհասնի ստորոտը:

Քարը կզլորվի ցած, քանի վոր ծանր է: Ողն ել է ծանր: Յեթե մի մեծ բշտիկ լցնենք ողով և դնենք կշեռքի վրա՝ այն ել լավ կշեռքի վրա, ապա կտեսնենք, վոր նա ավելի ծանր է, քան դա-տարի բշտիկը:

Ողն ել է դեպի ցած հոսում:

Բարձրում, սարերի գագաթներին շատ քիչ ող է լինում: Այն-տեղ շնչելը դժվար է: Բայց վոչինչ. չե վոր այնտեղ վոչ-վոք չի ապրում:

Մինչև անգամ արծիւներն այնտեղ չեն ապրում:
Այնտեղ միշտ ցուրտ է լինում և ամառը ձյունը չի հալչում:
Դեպի ցած, սարերի լանջերի վրա հանդարտ հոսում են սառցե
պետերը:

Նրանք հասնելով անդունդին, դլորվում են ցած. դա սառցա-
վեժն է. այնտեղ ջրվեժներ չկան:

Նայիր քարտեզին. այնտեղ նկարված է Հնդկաստանը:
տեսնո՞ւմ ես վերևի մասում սև ծալքեր. կարծես փետուրներ լինեն:
Դրանք փետուրներ չեն: Դրանք Հիմալայան բարձր սարերն են:

ԴԱՐՁԻԼԻՆԳ

Հիմալայան սարերի ստորոտում մի փոքրիկ շրջանակ կա. դա
Դարձիլինգ կուրորտն է: Յերբ Հնդկաստանում ամառ է լինում և
մարդկանց շունչը կտրվում է տոթից, այնտեղ հով է լինում:

Սպիտակամորթ անգլիացի պարոններն ամառը գալիս են այդ-
տեղ հանգստանալու: Նրանք պառկում են այնտեղ պատշգամբում
և դիտում են բարձր սարերի սպիտակ գագաթները, իսկ Սամին
արծաթե ափսեյի մեջ մատուցանում է նրանց պաղպաղակ և սառեց
բաժ գինի: Սամին այդ պարոններին կոչում է սահիբ: Այդտեղ ամեն
տարի գալիս են շատ սահիբներ: Նրանք իրենց ծառաներին ծե-
ծում են ձեռնափայտերով—ստեկներով: Նրանք, թիկնելով փա-
փուկ թախտերի վրա, կարդում են լրագրեր:

Նրանցից մեկն ասում է՝

— Գիտե՞ք ինչ. չուտով այստեղ ե գալու մի արշավախումբ. գա-
լու յեն տասնհինգ հոգի անգլիացիներ, գերմանացիներ, ավստրիա
ցիներ, չվեցարացիներ: Նրանք ուզում են բարձրանալ Կաչենին-
գի գագաթը:

Կաչենինգը շատ բարձր սար է: Նրա բարձրությունը համա-
րյա իննը կիլոմետր է: Դեռևս վոչ-վոչ չի բարձրացել նրա գագաթ-
ը: Մի անգամ յերկու անգլիացի փորձել են բարձրանալ նրա գա-
գաթը, բայց ընկել են սառցե անդունդը և ջարդվել:

ՅԵԿԱՆ

Շատ ավտոներ յեկան Դարձիլինգ: Ավտոներով յեկան տա-
նըհինգ սահիբներ՝ իրենց բազմաթիվ իրերով: Այդ բոլոր իրերը
դրեցին հյուրանոցի մոտ մայթի վրա և բռնեցին ամբողջ թաղա-
մասը: Այնտեղ կային ահագին քանակությամբ սնդուկներ,
արկղներ, պայուսակներ: Սահիբներից մեկն ուներ վզկապով և
սուր ափսեներով մի մեծ շուն:

Ամբողջ Դարձիլինգը հավաքվել էր նրանց նայելու:

— Ի՞նչ հարուստ սահիբներ են. նրանց ի՞նչին են պետք այդ-
քան իրեր. զարմանում եր Սամին:

Մինչև ուշ գիշեր ծառաները հազիվ կարողացան իրերը փողո-
ցից տուն տանել:

Սամին սկսեց հաշվել սնդուկները, բայց չատ-չուտով հաշիվը
կորցրեց:

ԱՌԱՋԻՆ ՅՈՒՑԱԿԸ

Հարուստ սահիբները հյուրանոցում նստել էյին մեծ սեղանի
շուրջը:

Նրանք ուտում էյին միս և խմում գինի: Ամեն տեսակի գինի
կար՝ և՛ կարմիր, և՛ վարդագույն, և՛ վոսկեգույն: Շունը նստած
էր մի անկյունում. նա յեղ եր միս ուտում:

Ամենագլխավոր սահիբին կոչում էյին պրոֆեսոր Դիրեն-
ֆուրթ:

Պրոֆեսոր Դիրենֆուրթը ձեռքին ուներ մի յերկար թերթ:

Նա բարձր ձայնով կարդում էր իրերի ցուցակը: «Մենք ունենք
ընդամենը չորս հարյուր իր, ամեն մեկը քառասուն կիլոգրամ
ծանրությամբ: Յերեսունը ճոպաններ են— չորս հազար մետր
յերկարությամբ:

Այնուհետև պողպատե կեռ և ողակներ, կացիններ՝ սառույց
ջարդելու համար, վրաններ, քնելու տոպրակներ, բրդե հագուստ,
կաշվե հագուստ, լուսանկարչական ապարատներ, կինոթաղանթ,
գրամեքենաներ, դեղարկղներ, ծանրաչափեր, բարձրաչափեր և
այլ գործիքներ. ապա կենսամթերքներ. շոկոլադ՝ 960 կիլո, խավ-
յար—300 կիլո, չվեղական չճորացող հաց, կոնսերվներ, գարե-
ջուր—500 շիշ, 24 արկղ գինի, գարու ողի, ոռոմ, չամպանսկի,
լիկյորներ...»:

ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՐԳԻՆ Ե

Կարծես ամեն բան կարգին է—ասաց պրոֆեսոր Դիրենֆուր-
թը— յեկեք ստուգենք, արդյոք բան չե՞նք մոռացել.

— Պանի՞ր.

— Կա. 200 կիլո:

— Ստրասբուրգի կարկանդակներ:

— Կա.

— Տերմոսներ.

— Կա.

— Ծալովի աթոռներ.

— Կա
 — Մաժալովի ջրցաններ
 — Կա.
 — Գրամաֆոն.
 — Կա. Թիթեղիկներ— յերկու արկղ.
 — Բիսկվիտներ՝ շան համար.
 — Կա.
 — Վոչինչ չենք մոռացել,— ասաց պրոֆեսոր Դիրենֆուր-
 Թը. ուրեմն կարող ենք բեռնակիրներ վարձել:

ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ

Հնդկաստանում սովյալներ շատ կան: Նրանցից ամեն մեկը ուրախ կլինեն աշխատանք ստանալու: Հյուրանոցի բակում հա-
 վաքվել եր ահագին բազմութիւն՝ մոտ հազար մարդ: Հարեան
 գլուղերից յեկել էին չինացիներ, Թիբեթցիներ, բենգալացիներ,
 գուրջներ:

Յերկու սահիբ մտնում են բակը:

Մեկն ասում է՝

— Մեզ հարկավոր է չորս հարյուր մարդ: Բեռնակիրը պետք
 է ունենա լավ մկաններ, ուժեղ կուրծք և առողջ սիրտ: Մոտեցե՛ք
 մեկ առ մեկ: Բժիշկ, սկսեցեք:

Առաջին մարդը մոտեցավ բժիշկին և հանեց պատառոտված
 շապիկը:

— Մկանները լավ են,— ասաց բժիշկը,— սիրտը կանոնավոր
 է, չնչիր:

Բժիշկը մոտեցրեց այդ մարդու շրթունքներին մի տուփ, վորի
 մեջ սլաք կար: Յերբ նա ամբողջ ուժով շնչեց, տուփի սլաքը
 պտտվեց:

— Հինգ հազար, ասաց բժիշկը,— պետքական է:

Մոտենում է յերկրորդը, շնչում է տուփի մեջ, վորքան պա-
 տում է ուժը, և զուտ ապուրջ սաստիկ կարմրում:

— Չորս հազար՝ հարյուր,— ասում է բժիշկը,— Թույլ է.
 բեռնակիրը պետք է ունենա ուժեղ շնչառութիւն:

— Վոչ, վոչ, յես կարող եմ: Յես ուժեղ եմ,— գոռում է նա:

Սակայն բժիշկն արդեն ուրիշներին է քննում:


— Վեց հազար, պետքական է:

— Չորս ու յերեք հարյուր. Թույլ է:

— Չոր ու վեց հարյուր. Թույլ է:

Յերեկոյան դեմ հյուրանոցի բակում մնացել էին միայն չորս
 հարյուր հոգի:





ՅԵԿՐՈՐԴ ՅՈՒՅԱԿԸ

Առաժոտյան պահին բեռնակիրներին բեռներ հանձնեցին. մեկին—բնդուկ, մյուսին՝ արկղ, յերրորդին տոպրակ:

Շունը շարունակ պտտում եր բալկում. նա, կարծես հանաքով, կծում եր բեռնակիրների մերկ վոտները:

Սահիբներից մեկը հերթով մոտենում ե բոլոր բեռնակիրներին: Ծառան հետևում ե նրան, ձեռին բռնած մի զամբյուղ: Սահիբը զամբյուղից հանում եր վզկապներ՝ պղնձե համարներով և կապում բեռնակիրների վզին:

Պրոֆեսոր Դիրենֆուրթը շրջում եր նրանց հետ և մի յերկար թերթի վրա գրում՝

«Բեռնակիր № 1—ճոպաններ.

—»— № 2—ճոպաններ

—»— № 56—զրամաֆոն

—»— № 341—շոկոլադ

—»— № 342—շոկոլադ»:

— Հիմա մենք այլևս չենք շփոթիլ,—ասաց նա, լրացնելով ցուցակը:

ՃԱՆԱՊԱՐՀՎԵՑԻՆ

Բոլոր սահիբները, վորոնք հանգստանում եյին Դարձիլինդում, դուրս եյին յեկել ճանապարհելու արշավախումբը:

Զորս հարյուր բեռնակիրները շարված, մի յերկար շղթա եյին

կազմել: Տղամարդիկ և կանայք կանգնել էյին մեջ ընդ մեջ: Յերբ արշավախմբի պետն ազդանշան տվեց, բոլորը միաժամանակ շալակեցին բեռները, պինդ բռնեցին թուկերը և ճանապարհ ընկան:

Բայց արկղներից մեկն ընկած մնաց ճանապարհին:

Այս ի՞նչ է նշանակում,—բացականջեց պրոֆեսոր Դիրենֆուրթը.—մի՞թե յես սխալվել եմ. չե՞ վոր չորս հարյուր բեռնակիր կար և նույնքան ել իր:

Ճանապարհորդները շրջապատում են արկղը: Նրանք կանգնել էյին՝ հենված մնալով իրենց յերկար փայտերին, վորոնց ողնությամբ սարերն էյին բարձրանում: Հանկարծ նրանցից մեկը ծիծաղեց:

— Ոհ, դա իմ նվերն է,—ասաց պարոն Սմիթը:—Դա չորս հարյուրմեկերորդ իրն է. այդ արկղի մեջ նվերներ կան, պրոֆեսոր:

— Ի՞նչ նվերներ:

— Այդ դեռ դադանիք է: Յերբ հասնենք հազար մետր բարձրության, կտանաք առաջին նվերը:

Բոլորն ել ծիծաղեցին: Դիրենֆուրթը սուլեց, վոր բեռնակիրները կանգ առնեն: Նա դարձավ դեպի ճանապարհ դքսողները:

— Պարոններ, —ասաց նա,—մեզ անմիջապես հարկավոր է ելի մեկ բեռնակիր: Գուցե՞ ձեզանից մեկն ու մեկը կարամաղրի իր ծառային:

Սահիբներից մեկը յերեսը դարձրեց, պտրելով Սամին:

— Գնա իսկույն, կապիկ, —ասաց նա:

Սամին չտապ չալակեց բեռը:

ՉԵԹԱՆ

Սամիի հետ գնում էր Չեթան: Նա բարձրահասակ չեր, բայց ամուր կազմվածք ուներ:

— Դու յերբ ետ բարձրացել ես լեռ, —հարցրեց նրան Սամին:

— Այո, յես հաճախ ուղեկցել եմ իմ սահիբներին դեպի լեռները, բայց վոչ այնքան բարձր:

— Իսկ ինչի՞ յե պետք հովանոցը:

— Հովանոցը խիստ անհրաժեշտ է: Ի՞նչպես կլինի առանց հովանոցի: Նա պաշտպանում է մեզ չար վոգիրներից: Հենց վոր թաղնվես հովանոցի տակ, չար հոգին այլևս չի կարող քեզ նկատել:

Սամին ծիծաղեց:

Յերեկոյան պահին Չեթան քիչ էր մնացել կոխոտեր մի ոձ: Նա սկսեց արագորեն հովանոցը բաց անել ու փակել: Յե՛վ այդպիսով կարողացավ վախեցնել ոձին:



Ոճն անհայտացաւ խոտերի մէջ:
— Չեթա, դու իրաւացի յես,—ասաց Սամին,—հովանոցն իս-
պապես վոր ողնում է: Ամսոս, վոր յես չունեմ հովանոց:

ՇՈՒՏՈՎ ԿՎԵՐԱԴԱՌՆԱՍ

Առաջին որերին շատ դանդաղ էյին սար բարձրանում: Ստվե-
րախիտ ծառերի տերեւները խշխշում էյին նրանց շուրջը:

Վոտքերի տակ հողն աշնքան փափուկ էր, կարծես գորգ
յիներ: Խոնավ ու տաք քամին փչում էր նրանց յերեսին: Մոծակ-
ները չարչարում էյին բեռնակիրներին, իսկ տղրուկները աննկա-
տելի կպչում էյին նրանց վոտքերին:

Մթնաշաղին նրանք կանգ էյին առնում: Պրոֆէսոր Դիրեն-
ֆուրթը կարգադրում էր.—

— № № 101, 102, 103, 104, 105,—հառաջ:

Այդ բեռնակիրները կրում էյին բրեզենտի վրաններ: Կես ժա-
մից հետո վրանները պատրաստ էյին: Սահիբները վրանի մուտքի
մոտ կախել էյին բրեզենտի ջրցաններ: Բեռնակիրները ջրցանի
մէջ ջուր էյին լցնում:

Սահիբները լողանում էյին ջրցանի տակ, ապա իրենց մար-
մինը չորացնում էյին բրդոտ սրբիչներով: Հետո նրանք ընթրում
էյին:

Գիշերը նրանք քնում էյին ծալովի մահճակալներում, իսկ
բեռնակիրները՝ գետնին—խարույկների մոտ: Կաթսաների մէջ
բրինձ էյին յեփում: Բրինձը շուտ չի յեփում: Կարելի չէր քնից
կշտանալ, մինչև վոր կերակուրը կեփվեր: Լուսադեմին կրկին ճա-
նապարհ էյին ընկնում:

— Վատ տեղեր են. այստեղ ջերմի վայր է,—ասում է Չե-
թան,—բայց մեզ մոտ, Ռիչենփուրդում շատ լավ է:

Ծառերը չքացան: Ողը հետզհետե չորացավ:

Իերկ ու բարձր բլուրի վրա յերևացին Ռիչենփուրդի տնակ-
ները:

— Ահա և մեր տունը,—ժպտալով ասաց Չեթան,—այն էլ կինս
և և տղաս:

Կիսափուլ տնակի շէմքում կանգնած էր կինը և ձեռքին յերե-
խան:—Շո՞ւտով կվերադառնաս,—դռնէց նա Չեթային:

ԱՌԱՋԻՆ ՆՎԵՐԸ

Յերկու որ ե, ինչ գնում են մերկ ժայռերի վրայով: Տեղ-տեղ ձյուն կար: Հոտավետ, կարմիր, սպիտակ, դեղին ոռոգողենդ-րոնները ծաղկում էին հովիտներում:

Յոնգրի գյուղում բեռնակիրները բեռները շալակներից վար Գրեցին:

— Ուռա՛. չորս հազար հինգ մետր ե,—բացականչեց սահիր-ներից մեկը: Դե՛հ, ցույց տվե՛ք ձեր նվերը, պարոն Սմիթ:

— Այո բոլորիս,—պատասխանեց նա.—

— Հեյ, № 401:

Սամին մոռացել էր իր համարը, քանի վոր նա իր վզին վզկապ է համար չունե:

Սահիրը փնտռեց, գտավ նրան և ձեռնափայտով պինդ խփեց:

— Տար արկղը վրան,—հրամայեց նա Սամին:

Բոլոր սահիրները հավաքվել էին արկղի շուրջը:

Սահիրն արկղից հանում է մեծ ծրար. ծրարի մեջ կա փոքրիկ, բայց շատ փայլուն տուփ, մի փոքր կլոր մեքենա և ապակյա մեծ բաժակ: Բաժակի մեջ կար շարժվող ձողիկ՝ ծայրին յերկու փոքր թիեր:

— Տվե՛ք ինձ ձու և շաքար,—ասաց այդ սահիրը:

Նա արկղին միացրեց մեքենան ու բաժակը: Ապա կոտրեց ձուն, դեղնուցը գցեց բաժակի մեջ, իսկ սպիտակուցը թափեց գետին: Քսան դեղնուց գցեց բաժակի մեջ և քսան սպիտակուց թափեց գետին: Բաժակի մեջ ածեց շաքար և սեղմեց մեքենայի կոճակը:

Թխակներն իսկույն սկսեցին պտտվել: Դեղնուցները սպիտակեցին և բարձրացան. ահա նրանք հասել են բաժակի պռունկին:

— Պատրաստ ե,—ասաց սահիրը:

Բոլորը ծափ տվին:

Իսկ Սամին ձվերի սպիտակուցները դետնից ծածկաբար հավաքեց թղթի մեջ և տարավ խարույկի մոտ: Չեթան ուրախու-թյունից նույնպես ծափ տվեց:

ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՐԳԻՆ Ե

Առջևում յրեւում էին ձյունով ծածկված դաշտեր և օռոցե պատեր: Վերելքներ, նեղ շաղիվներ անդունդների յեզրերին, ճեղքեր և օռոցե ձորեր:

Սառնամանիք եր: Փայլուն ձյունն աչքեր եր կուրացնում:

Սահիրները հագան իրենց լեռնային հագուստները. վոտքե-րին—բրդե հաստ գուլպաներ, յերեք գուլգ, և ծանր կոշիկներ՝ պողպատե մեխերով: Մեխերը խրվում էին օռոցի մեջ: Այդպիսի կոշիկներով մարդ չի սայթաքի ձյան վրա: Նրանց կաշվե շալվարի ու կուրտկայի տակից կարված եր այծի փափուկ մորթի: Սառնա-մանիքն ամենևին չի զգացվում: Շալվարը խրված է կոշիկի մեջ, իսկ թեքերը՝ թաթպանների մեջ: Թաթպանները չեն ընկնի, քանի վոր կապված են ռետինե ողակներով: Գլխին—առանձնահա-տուկ մի կորդակ:

Նախ յերեսներին խիտ քսում են վազելին, ապա կապում են կորդակի ցածի մասը և այդպիսով ցրտից պաշտպանում են աշ-տերը, բուկը և վիզը:

Այնուհետև հագնում են կորդակի վերին մասը, վորով ծած-կվում են քիթը, ճակատը, ականջները և մազերը: Լեռնային արևն այլևս չի կարող խանձել, քամին չի կարող վնասել նրանց կաշին: Աչքերի տեղում կորդակի մեջ դրված են մոխրագույն ապակիներ: Այժմ աչքերը պաշտպանված են սպիտակ ձյան ուժեղ փայլից:

Բոլոր տասնհինգ սահիրներն ել նման են ջրասուզակների: Բո-լոր կոճակներն ել կոճկված են, թելերը կապված: Ջրասուզակնե-րից մեկը, այն է՝ պրոֆեսոր Դիրենֆուլթը դիտում է իր ընկերա-կիցներին: Ամեն ինչ կանոնավոր ե:

— Ամեն ինչ կարգին ե,—ասում է պրոֆեսոր Դիրենֆուլթը:—Դեհ, հառաջ:

ԱՌԱՋԻՆ ԲՈՐԱՆԸ

— Ասա, ինդրեմ, լեռներում միշտ այսպես ցո՛ւրտ ե լե-նում,—հարցնում է Սամին:

— Այո,—պատասխանում է Չեթան:

Սամին քայլում եր կռացած և հաճախակի ուղղում եր մեջքի ծանր բեռը: Մինչև ծնկները խրվել եր նա ձյան մեջ: Սամին յեր-բեմն աչքերը փակում եր՝ ձյան փայլից պաշտպանվելու համար: Այդ բոլորներին նա լսում եր, թե ինչպես ե ձյունը ճոճոտում բեռնա-կիրների վոտների տակ: Հետևից նա լսում եր սահիրների ծիծաղը և շան զիլ հաջոցը:

— Չգիտե՞ս արդյոք, չուտ կը հասնե՞նք դադարքին:

— Դեռ վոչ. յերբ վոր անցնենք Կանդ—Լա օսրը:

Սամին նայեց լեռան դադարին, վորը փայլում եր արևի տակ, վորպես մի ահագին ապակի: Աջ կողմից յերեւում եր Կար-բու լեռան սրածայր դադարի:

— Տես, ահա, բորան ե սկսվելու,—ասաց Չեթան:

Յածր, հեռվում, Բենգալիայի կապույտ հարթավայրերից ամպեր եյին շարժվում: Նրանք հավաքվում էին ու գոյացնում սպիտակ փայլուն դնդեր, հետո ավելի ու ավելի մոտենում: Ահա նրանք անցնում են չավիղների մոտով. չուտով ծածկում են լեռների գագաթները: Չյունը մթնում է, փայլում և կրկին մթնում: Քամին խփում է յերեսներին:

Սպիտակ փոշին պտտվում է շուրջը. բոլոր բարձունքներից սկսում է ձյուն տեղալ, կարծես մեկը թափ տվեց նրանց: Աչքերը խուփ են գալիս, քամին խփում է մարդկանց կրծքին:

«ՌԵՔՍ, ՄԱՏ ԱՐԻ».

Կրկին արևը յերեաց: Ասեղի նման աչքեր ե ծակում. դժվար է ձյանը նայել: Սամիի յերեսից քրտինք ե թափվում: Քրտինքի կաթիլները թափվում են չապիկի վրա և իսկույն սառչում: Վոտքերը ծալվում են. շատ ե դժվար դիմանալ բորանին, արկղն էլ ավելի յե ծանր թվում: Սամին որորվում է, նա վախ ե զգում, վոր կրնկնի:

Այդ միջոցին յետևից մեկն իր ձեռքը դնում է նրա ուսին: Սամին յետ ե նայում. դա № 312 կին բեռնակիրն է:

— Տուր ինձ քո ձեռքը,—ասում է նա: Յես ուղղակի կուրացել եմ, այլևս վոչինչ չեմ տեսնում:

Սամին ձեռքը մեկնում է նրան. ինքն ել հաղիվ ե քայլում կիսախուփ աչքերով:

Հանկարծ կանչում են՝

—Ռեքս, մոտ ա՛րի:

Ժայռի վրա յե բարձրացել սահիւրներից մեկը:

Նա իր ձեռքին ունի մի սև տուփ: Նա կրկին կանչում է՝

— Ռեքս, մոտ ա՛րի:

Սուր-սուր ականջներով չունը հանկարծ դուրս ե պրծնում իր տեղից: Նա ցատկում է Սամիի վրա: Սամին վայր ե ընկնում խոր ձյան մեջ:

— Ռեքս, հանդարտ,—լսում է Սամին, գլորվելով ձյան մեջ: Նա փնտրում է իր արկղը—սպիտակ սահիւրների արկղը:

ԴԱԴԱՐՔ

Արշավախումբն անցել եր Կանգ-Լա լեռնաշղթան: Այժմ ճանապարհը տանում է դեպի ցած, դեպի Չերամ: Չյան չերտը մնաց բարձրում. ճանապարհն ելի ընթանում եր կանաչ մարդագետին:

Ների միջով: Լեռների լանջերին մամռոտ սոճիներ եյին պատահում. ձնծաղիկներն ու կարմիր ոռոգողենդերոնները լիքն էյին վրանների շուրջը:

Սահիւրների վրանը լուսավորում եր կարմիր լապտերը: Սահիւրները նստած էյին ծալովի աթոռների վրա, ծալովի սեղանի շուրջ:

Նրանք դբադված էյին լուսանկարչությամբ:

Լուսանկարչի ձեռքին եր լուսանկարչական ապակին: Այդ ապակու վրա լուսանկարված եր Ռեքսը:—Յես չանը լուսանկարեցի անմիջապես բորանից հետո,—ասաց նա:

Նա մոտեցրեց ապակին լապտերին:

— Տարորինակ ե,—ասաց նա.—չեմ կարող հասկանալ՝ այս ի՞նչ բան է:

Ապակին սկսեց աստիճանաբար մթնել, սևանալ:

— Այդ վոտ ե.—բացականչեց սահիւրներից մեկը,—այն ել՝ մերկ վոտ:

— Վո՞տ. այդ ի՞նչպես կարող եր պատահել,—զարմացել եր լուսանկարիչը: Այժմ արդեն պարզ ե, վոր դա վոտ է: Նա դուրս եր ցցվել ձյան միջից. յերեում էյին ծունկն ու բոլոր մատները:

Ապա նույն ապակու վրա յերեաց չունն իր սուր-սուր ականջներով:

Շան բերանը բաց եր մնացել:

— Ո, յես այժմ հասկացա,—ծիծաղեց լուսանկարիչը:—Նա ինձ մոտ վազելիս վայր եր դլորել այն տղային. ահա և արկղը. նույն իսկ յերեում է համարը—401:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆՎԵՐԸ

Այդ միջոցին սահիւրները հիշեցին, վոր № 401 արկղը նվերների արկղն է: Արկղի տերը դտավ Սամիին և արկղից հանեց կոնսերվի մի քանի տուփ: Դրանք հասարակ տուփեր չեն: Յուրաքանչյուր տուփի կողքին կար կոճղամ: Յերը սահիւրը սեղմեց կոճղամը, տուփի մեջ մի ինչ վոր բան սկսեց թշշալ:

Չեռք տվեք, տեսեք.—ասաց սահիւրը,—տուփն արդեն տաքացել է և այրում է կրակի նման: Տուփի մեջ մի անկյունում կա կիր, իսկ մյուսում՝ ջուր: Յերը սղմում են կոճղամը, ջուրը և կիրը միախառնվում են և ստացվում է շատ տաք գոլորշի: Արդյոք կամենո՞ւմ եք փորձել, պարոն պրոֆեսոր, յեսեցեսանի կոնսերվի ե սա: Բայց պրոֆեսոր Դիրենֆուրթը ամենևին տեղից չչարժվեց: Նա նստած եր մի կողմ և տրտում նայում եր դեմին:

— Ի՞նչ է պատահել ձեզ, պարոն պրոֆեսոր,—զարմացած հարցրին սահիւրները:

— Ո, թողեք, յես պրոֆեսոր չեմ, այլ մի հիմար արարած, — ասաց Դիրենֆուրթը, — յես մի սոսկալի սխալ եմ գործել: Դուք տե՞սաք այն լուսանկարը:

— Այսինքն՝ վճար:

— Այո, մեկ վոտը: Մենք մոռացել ենք... մոռացել ենք մեկ հետ կոշիկներ վերցնել բեռնակիրներին համար:

Սահլըներն անշարժ մնացին: Նրանցից վոչ մեկը չչարժվեց տեղից:

— Իսկապես վոր, ... փնթփնթաց նրանցից մեկը. — Իսկի մաքուր ել չի անցել, վոր բեռնակիրներին ել են հարկավոր կոշիկներ:

— Մենք մոռացել ենք նրանց համար վերցնել նաև ակնոցներ — ընդհատեց նրան պրոֆեսորը:

«ՆԱՅԵՑԵՑԵՔ ԿԱԶԵՆԻՆԳ ԼԵՌԱՆ»

Ուշ գիշերներին արշավախումբը հասնում է Չերամ: Դյուղը խոր քնի մեջ էր: Յակ-յեղների նախիրն արածում Վեր մարգագետնի վրա, գյուղի մի ծայրում: Միայն լույս կար վանքի մեծ տանը: Բեռնակիրները մի կերպ սարքել էին իրենց վրանները և պառկել քնելու: Վրաններից մեկում բժիշկը փոքր լապտերի լույսի տակ վիրակապույթյուն էր անում: Բեռնակիրներից յերեքին Չերամ ելին բերել ձեռքի վրա, քանի վոր նրանց վոտները սառել էին:

Մի այլ վրանում բեռնակիրները հավաքվել էին թիբեթցի խոհարարի շուրջը: Խոհարարը ձեռքը պարզել էր դեպի հեռավոր Կաչենինգ լեռան մութ գագաթը: Նա ասում էր.

— Այստեղ, այդ լեռան գագաթին է Կանգ-Մի ահեղ աստծու գահը: Այնտեղ է ապրում նաև Մի-Գո ձյունե ահեղ մարդը: Յեթե մարդկային ցեղից վորևե մեկը համարձակվի անցնել այդ թաղավորության սահմանը, Մի-Գոն նրան խիստ կպատժի: Նա ահեղ է. նրա մարմինը սպիտակ է և բրդոտ: Նա չի թողնի, վորևե մեկը բարձրանա այդ լեռան գագաթը...

Յերրորդ վրանում խոսում էր Չեթան. —

— Պահանջներ, վոր մեզ տան կոշիկներ և ակնոցներ. մենք առանց դրանց կմեռնենք:

Բեռնակիրները համաձայնվում են նրա հետ:

— Ճիշտ է, ճիշտ է, — ասում է յին բեռնակիրները: Մենք այստեղ ենք հասել կիստիեղան վիճակում: Մինչդեռ ճանապարհը նոր է սկսվում: Նայեցե՛ք Կաչենինգ լեռան:



ՄԱՀԱՐԱՋԻ ՀՐԱՄԱՆԸ

Պրոֆեսոր Դիրենֆուրթը համոզում էր բեռնակիրներին շա-
քունակել ճանապարհը:

— Մենք այստեղ, Չերամում, —ասում էր նա, — ձեռք ենք բե-
րել յերեսուն գույդ կոչիկ և տասերկու գույդ ակնոցներ:

— Դա քիչ է, — առարկում էին բեռնակիրները, — հապա ի՞նչ
են անելու մյուսները:

Այն ժամանակ վանքից կանչվեցին լամա-վանականները: Նրանք
իրենց հետ լեքել էին պղնձե ափսեներ և շատ յերկար փողեր:
Նրանք նախ աղոթեցին, հետո սկսեցին պղնձե ափսեները դարկել և
փողեր փչել: Ամենազլխավոր լաման յերկար ժամանակ լուռ էր.
հետո նա սկսեց ցածր ձայնով.

— Լսե՛ք Բուդդայի ձայնը. վողորմած Բուդդան պատվիրում
է հնազանդվել սահիբներին: Վողորմած Բուդդան ձեզ կպաշտ-
պանի:

— Լսում ե՛ք. Բուդդան է պատվիրել. չնչացին բեռնակիր-
ները: Ուրեմն՝ պետք է գնալ:

— Բուդդան լավ կաներ, յեթե մեզ համար կոչիկներ ուղար-
կեր, — ասաց Չեթան. — բեռնակիրներից շատերը յերես դարձրին
լամայից:

Այն ժամանակ առաջ է գալիս անգլիական սպայի համազգես-
տով սուբարդարը և ասում է. —

— Յես այստեղի սուբարդարն եմ, Նեպալ մահարաջի փոխա-
նորդը: Մեծ մահարաջը կարգադրել է ինձ, վոր յես ոգնեմ ուժեղ
սահիբներին:

Նա պատյանից հանեց ատրճանակը և ուղղեց բեռնակիրներին
վրա.

— Հապա տեսներ՝ ո՞վ է հրաժարվում տեղից շարժվել:

Բեռնակիրները լուռ էին: Պրոֆեսոր Դիրենֆուրթը աղղա-
նըջան տվեց. բեռնակիրները լուռ ու մունջ շալակեցին արկղները
և առաջ ընկան:

ԿԱԶՆՆԻՆԴԻ ՍԱՌՅԱԴԱՇՏԸ

Խոր ձորում մի գետ է հոսում. այդ գետն առաջանում է Կա-
չենինգ լեռան վրա հալչող ձյունից. գետը տեղից պոկում ու գլո-
րում է ահագին քարեր. ամեն մի քարը տան մեծության է: Այդ
գետն ճանապարհի սկիզբն է. այստեղ գեռես տաք է:

Ահա յերկու գաղաթներ, սառցե յերկվորյակ աշտարակներ
գեպի յերկինք են ձգվում: Նրանց կարելի չէ անվանել՝ «Կաչե-

նինդի դռներ»։ Վերջին դյուղից, յակ-յեզները հոտից, վանքից և մահաբաժնի փոխանորդից մինչև այդ «դռները» դեռ ևս տասն որ-
վա ճանապարհ կա անցնելու։ Հեռվում յերևում է մի սև գիծ. այդ
սահիբների արչավախումբն է, վոր մոտենում է լեռան ստորոտին։
Բեռնակիրները շատ դանդաղ են շարժվում։ Այնտեղ անհնարին է
արագ գնալ. այնտեղ դժվար է շնչելը։ Համարյա ամբողջ ողն այդ-
տեղից հոսել է դեպի ցած, ձորը։ Արչավախումբն իր ընթացքում թող
նում է կարմիր հետք. այդ այն արյունն է, վոր հոսում է բեռնա-
կիրների մերկ վտաքներից. սուր սառույցը կտրտում է նրանց վոտ-
քերը։

ՎԵՐՋԻՆ ՃԱՄԲԱՐԸ

Սառցադաշտի վրա սառցե գետ է թափվում։ Սառույցը թափ-
վում է կտոր-կտոր։ Ահա, վերևում, սառցե փայլուն պատից կախ-
ված է մի փայլուն ապակի. նա պոկվել է և ընկնում է ցած։ Ահա,
նա գլորվելով, դառավ արկղի չափ, տրամվայի վագոնի չափ, մի
տան չափ։ Չոր հարկանի տան մեծության չափ սառցե գունդը գլոր
վելով ողում և գունավորվելով ծիածանի գույներով, ընկնում է
սառցադաշտերի վրա. արձակելով հազար թնամիներից ել ավելի
ուժեղ ձայն, սառցեգունդը ջարդ ու փշուր է լինում։ Այդ՝ սառցե
գետի մի բեկորն է միայն։

Վրանները բացված են սառցե դաշտի վրա, սառցավեժից քիչ
հեռու։ Այդտեղ բեռնակիրները հանգստանում են, նախ քան վճռա-
կան վերելք սկսելը։ Սահիբներն ուրախ են։ Նրանք խմում են գի-
նի, գրամաֆոնը նվագում է ուրախ պար՝ Փոկսարոտը։ Նրանք
ընտրում են տասն ամենահազանդ բեռնակիրներ և կերակրում են
չոկոլադով։

Ստավոտյան դեմ բժիշկը սրսկիչի միջոցով յուրաքանչյուր
բեռնակրից քամում է մի-մի բաժակ արյուն, այսպես բեռնա-
կիրները շեն կարող բարձրանալ դեպի այդպիսի վերելք. նման
բարձրության վրա, վորտեղ ողբ քիչ է, կարող է քթից առաջա-
նալ արյունահոսություն։

Բժիշկը գործիքի մեջ քամած արյունը թափում է ձյան վրա,
արյունն անմիջապես սառչում է։ Սամին վերջինն է մոտենում
բժիշկին։

— Տես, ասում է նրան Չեթան, — դոյացել է արյան մի մեծ
թումբ։



43284-65



— Միայն թե կարողանանք բարձրանալ այդ յերեք սանդղե-
վանդի վրա, —ասում է պրոֆեսոր Դիրենֆուրթը:

— Այդ յերեք սանդղեվանդը վերջին արգելքն են մեր ճանա-
պարհին:

Կաշենինդն իր անմատչելի սառցե պատով, կարծես, դիտ-
մամբ յերես է դարձրել մարդկանցից: Այդ պատը ճեքվել է միայն
մի տեղում և դոյաղբել յերեք հատ ահագին աստիճաններ:

Բեռնակիրներն էլ մի մասը գինվում է կացիններով: Սառուցի
վրա պետք է փորել աստիճաններ՝ առաջին սանդղեվանդի վրա
բարձրանալու համար:

Կացինը խրվում է սառցի մեջ: Մեկ, յերկու, յերեք: Տասն-
համից ավելի չի կարելի հարվածել. մարդու շունչը չի հերիքի:

Չեթան հաղիվ է շնչում. նա նստում է հանգստանալու համար,
մի ուրիշը փոխարինում է նրան:

Առաջին աստիճանը պատրաստ է: Կարելի չէ վտտ դնել նրա
վրա և պատրաստել յերկրորդ աստիճանը:

Դանդաղ, շատ դանդաղ են աստիճանները՝ պատրաստվում
սառցե լեռի ժայռի վրա: Գլուխ է պտտվում, յերբ մարդ նայում
է ցած: Մեկ ել տեսար, հանկարծ փչեց սուր քամին: Յեթե քամին
փչի ավելի ուժեղ, ապա մարդ չի դիմանա, սլկուն աստիճաննե-
րից կգլորվի ցած և ջարդ ու փշուր կլինի՝ սառուցներին դիպե-
լով:

Ահա պատրաստ է վերջին աստիճանը: Նրա և սանդղեվանդի
միջև կա միայն սառցե մի թումբ, բայց այդ թումբի վրա կարող է
տեղավորվել մի ամբողջ դյուղ. մինչդեռ նրա վրա վտտ դնելը
սարսափելի չէ, քանի վոր նա որորվում է, նա գտնվում է սառցե
յերկու ծայրերի վրա և կշեռքի նման տարուբերվում է:

— Ո՞վ կփորձի անցնել այդ սառուցի վրայով, —հարցնում է
պրոֆեսոր Դիրենֆուրթը:

Բոլորն ել լուռ են, վախենում են:

Այդ միջոցին առաջ է դալիս Չեթան. նա բռնում է ճոպանի
մի ծայրը և թռչում է սառուցի վրա:

Սառուցը յնցվում է և տարուբերվում:

Մինչդեռ Չեթան առաջ է գնում: Նա առաջ է գնում և իր հետ
քաշում է ճոպանը. նրա մի վտտը սանդղեվանդի վրան է, իսկ
մյուսը՝ սառցե թմբի վրա:

Պատրաստ է:

Սառցեթումբը դանդաղորեն տարուբերվում է: Չեթան ճոպանի
ծայրը կապում է սառցե ժայռի շուրջը: Այժմ թե սահիլեն
թե բեռնակիրները հենվելու տեղ ունեն:



Յերկաթե ձողերը ցցված են սառուցի մեջ: Զողից-ձող մինչև վերջին աստիճանը կապված է ճուղան: Սահիլները, ճուղանից բռնած, վեր են բարձրանում: Նրանք մեծ գգուշով թյամբ անցնում են մեկ աստիճանից մյուս աստիճանը: Կոշիկները մեխերով խրվում են սառուցի մեջ: Դժվար է շնչել. ողբ քիչ է: Սահիլներն ուժասպառ յեղած վայր են ընկնում սանդղեվանդի վրա:

Նրանք այնպես արագ են շնչում, ինչպես շունը՝ տոթ որերին:

Սահիլներին մեկը գոռում է պրոֆեսոր Դիրենֆուլթին, վորը գտնվում է ցածրում:

— Շուտ ուղարկեք մեզ համար թթվածին:

— № № 315, 316, 317—անցեք վերև. — կարգադրում է գլխավոր սահիլը:

Բեռնակիրներից յերեքը մոտենում են աստիճաններին: Նրանք նման են չղջկի. նրանցից յուրաքանչյուրը չալակել է տառը բարձ՝ լի թթվածնով: Թթվածինն այն նյութն է, վոր մենք շնչում ենք:

Նրանք բարձրանում են մեծ դժվարությամբ, մագլցելով:

— Շուտ արեք, դե, շուտ արեք ե՛, — Բիլավում են վերևից սահիլները:

Բարձերի ծայրերը դիպչում են սառուցին և դժվարացնում բարձրանալը: Քամին տատանում է բեռնակիրներին, բարձերը վորպես առագաստներ դեպի ցած են քաշում:

Բեռնակիրները վոչ թե շնչում են, այլ խռպոտում:

Զարկերակը քոնքերի մոտ խփում է մուրճի ուժով: Փոքրիկ բենզալացու քթից սկսում է արյուն հոսել:

Ահա հասան սանդղեվանդին:

— Շուտ արեք, տվե՛ք, դե տվե՛ք:

Սահիլները խլում են բեռնակիրների շալակից բարձերը: Սե, փայլուն խողովակները մոտեցնում են իրենց բերաններին: Նրանց կուրծքը լցվում է հրաշալի թարմ ողով: Այդ ողը թթվածինն է:

Բեռնակիրները մեկը մյուսի յետևից բարձրանում են սանդղեվանդի վրա:

Սամին, աստիճանի վրա բարձրանալիս, տրորում է վոտքերը ձյունով. նա վախենում է, վոր վոտքերը կապեն ու կընկնի. նրա վոտքերը փետացել են:

Առաջից գնում է պրոֆեսոր Դիրենֆուլթը: Տարուբերվող

սառցե թմբի առաջ սահիլը կանգ է առնում: Նա դիմում է դեպի ցած և կանչում՝

— Ռեքս, արի մոտս, Ռեքս, արի մոտս:

Շունը թաթերով չանդոտում է սառուցը: Նա գլորվել է ցած և վնդոտում է:

— Տուր ինձ արկղը և գնա շունը բեր, — ասում է սահիլը:

Սամին, պինդ բռնելով ճուղանը, ցած է իջնում աստիճաններից:

ԱՌԱՎՈՏՅԱՆ

— Նա կրծել է իմ ուսը, — ասում է Սամին:

Յես կարծում եյի, թե կմեռնեմ:

Զեթան այլևս չէր լսում. նա քնած էր:

Քամին վրանների բրեզենտն էր իրար խփում:

Բեռնակիրները կողք-կողքի կալած քնել էյին:

Նրանցից մեկը, հենվելով իր բազուկի վրա, նստում է:

— Մենք բոլորս ել կմեռնենք, — ասում է նա և իր շալակից պոկում է մի մեծ լաթ:

— Ոգնիր ինձ՝ վոտս կապելու, — խնդրում է նա Սամին:

Այդ ծամանալի հնչում է աղբանշանը: Այդ սահիլն է, գըլխավոր սահիլն է աղբանշան տալիս մեկնելու:

Վոչ-վոք աեղից չի շարժվում:

— Սահիլ՞ բն է տվել քեզ այդ բարձը:

— Այո, նրա մեջ մի չի՛ թթվածին կա, — պատասխանում է Սամին:

Նա կռանում է կապելու ընկերով վոտը:

— Այս բարձի մեջ, — ասում է Սամին, — իսկական ող է. այնպիսի ող, ինչպիսին կա մեր գյուղում:

Վրանի մոտ լավում են ծանր քայլեր:

Զողերը մեկ առ մեկ հանվում են: Բրեզենտը վայր է ընկնում: Ուժեղ լույսն ընկնում է աչքերին:

— Վեր կա՛ցեք, — ասում է սահիլը. — վերցրե՛ք կացինները:

ՏԱՄՆ ՈՐ

Բեռնակիրներն իրար հետ կապված են ճուղանով: Յեթե մեկն ընկնի, մյուսները կապեն: Նրանք արդեն տասն ուր է, աշխատում են, վորպեսզի ճանապարհ բացեն դեպի յերկրորդ սանդղեվանդը:

Վերևից, ուղղորդ դադաթներից, ջրվեժի նման, ձյուն է

Թափափում: Ամբողջ ժամանակը փրվածքների դղրդացող ձայնն է լսվում: Սառցե ժայռեր են պոկվում ու ցած գլորվում: Ջրունե փռչին սյունի նման մինչև յերկինք ե բարձրանում: Արևի լույսը թույլ է ու աղուտ: Գիշերները տեղացող ձյունը ծածկում է լուս- նին:

Պետք է բարձրանալ ընկերոջ ուսերի վրա և սառցի մեջ ցցել յերկաթե ձողեր՝ ողակներով, ապա ողակների միջով անցկացնել ճուղին, այնուհետև բռնելով ճուղանը, սառցե պատի մեջ փոսեր փորել, վրտ դնելու համար:

Պետք է դահուկներով անցնել ձեղքվածքի վրայով, վոր ամբողջովին ծածկված է փխրուն ձյունով:

Պետք է...

Մինչդեռ անգույթ արևը մարդու աչքեր ե կուրացնում: Իսկ սառցի սուր ստամները խորը մխվում են մարդու վրտքերի մեջ:

Ոգը չի հերիքում. մարդու սիրտը բարախում է ուժգնորեն, ինչպես ձուկն է թալրաում:

Սահիբները քնած են մորթե տոպրակներում. նրանք չեն զգում, թե սարերից ինչպես սուր քամի յե փչում:

Սահիբները գիտեն միայն աղբանջան տալ և կարգադրու- թյուններ անել. նրանք չեն չալակել ծանր տոպրակներ և արկղ- ներ: Սահիբները խմում են գինի և լսում են, թե ինչպես ե գրա- մաֆոնը նվագում ուրախ պարեր: Բայց գրամաֆոնն ել, կարծես ուրախ չե, նրա մեջ, կարծես սառել ե յուզը. նա խոստոտում է ու թշնջում, ապա ձայնը կարում:

Շատ ե ցուրտ, վորպեսզի կարելի լինի նվագել ուրախ պա- րեր:

ՓԼՎԱԾՔԸ

Բոլորն ել կանգ են առել և նայում են վերև: Համարյա բո- լորն ել գտնվում են յերկրորդ սանդղեմանդի վրա: Առաջին սանդղեմանդի վրա մնացել են Չեթան, Սամին և դեռ ելի հինգ բեռնակիրներ: Այստեղ յերկրորդ սանդղեմանդի վրա բոլոր սահիբներն ու բեռնակիրները նայում են դեպի վեր:

Առաջին սանդղեմանդի վրա գտնվող յոթ հոգին ել են նա- յում դեպի վեր: Վոչ վոք չի չնչում: Վերևից, Կաչենինգի գա- ղաթից փլվել և դեպի ցած ե գլորվում սառցի մի գունդ:

Այդ գունդը անից ել մեծ է, չոգենավից ել մեծ է:

Այդ գունդը գլորվելով, պոկում է սառցե ժայռեր և քաշում իր յետևից:

Փլվածքի հետ միաժամանակ գոյացել է ձյան ամպ:

Ահա փրվածքը ուղղվեց դեպի աջ. ապա կրկին դեպի մեզ:

Սանդղեմանդը դողդողում է մարդկանց վառքերի տակ:

Ջարհոթի յեռարան ե. նայել չի լինի:

Մարդիկ կպել են գետնին, սառուցին:

Դղրդյունն ավելի ու ավելի յե մոտենում: Սառուցե սարը գնդակի նման պոկվում է վերին սանդղեմանդից, անցնում է յերկրորդի վրայով և բնկնում առաջինի վրա: Սառցե գնդին հետևում են նրա բեկորները: Ջրունը ծածկում է նրանց և տի- րում է յուր թյուն: Սամին մի կերպ դուրս ե պրծնում ձյան տա- կից: Կենդանի յեն մնում նաև նրա ընկերները— փրվածքը նրանց չի փնասում: Բայց Չեթան չի յերևում:

ՄԻԱՅՆԱԿ

— Հառա՛ջ.—հրաման ե տալիս սահիբը:

— Մենք մնում ենք այստեղ,— ասում է Սամին:

Տասը բեռնակիրներ կանգնած ելին կողք-կողքի: Նրանք ի- րենց ձեռքին ունեյին բռնած կացիններ, քրունդներ և թիակներ:

— Սահիբ,— ասում է Սամին,— գուցե կենդանի յե մեր ընկերը:

— Հավաքել իրերը և չարվե՛լ,—հրամայում է սահիբը:

Բայց բեռնակիրները տեղից չեն շարժվում:

Սահիբը զայրացած սեղմում է ձեռքի լեռնային փայտը. ապա հանկարծ քրքջում է:

— Շատ լավ,—ասում է նա,—մնացե՛ք՝ առանց սննդի և վրանների:

— Մենք մնում ենք. գուցե կարողանանք նրան ձյան տակից հանել:

— Իսկ ո՞վ պետք է տանի ձեռ իրերը:

Բեռնակիրների շարքից առաջ ե գալիս մեկը: Նա իր ուսերին չալակած ուներ գինու ծանր արկղը:

— Յես,—ասում է նա:

Պրոֆեսոր Դիրենֆուրթը ցանկի մեջ ուղղումներ ե մտցնում: Նա գրում է՝

№ 211—գինի+նվերների արկղը:

— Ել ուրիշ ո՞վ:

Գրում է՝ № 178— գրամեքենա+վրան: № 341 չոկոլադ +չո- կոլադ:

Արչավախումբն առաջ ե շարժվում դեպի յերրորդ սանդղե- մանդը: Մինչդեռ Չիթայի ընկերներն իջնում են ցած, սառցե լեռան մոտ, վոր ծածկվել եր ձյան հյուստով:

Բեռնակիրներն շղթան դեպի Կաշենինդի լանջերն և բարձրանում:

Յերրորդ սանդղեմանդի վրա ուղիղ ճանապարհով հնարավոր չե բարձրանալ, պետք է կողքից անցնել: Սահիբներից մեկն անդադար նայում է արևմտքին: Դա մի դործիք է, վորը ցույց է տալիս տեղի բարձրությունը: Սլաքը մոտենում վեց հարմար մետրի: Դեռ ելի՝ դնում են կես ժամ, ելի՝ մի ժամ:

— Ձենալեմեններ, — դռնում է այդ սահիբը, — հասել ենք վեց հարմար մետրի: Հեյ, №401 բեռնակիր:

— 401 բեռնակիրը մնացել է ցածրում, — ասում է պրոֆեսոր Դիրենֆուրթը:

— № 211 բեռնակիր, մոտ յեկ:

№ 211 բեռնակիրը դուրս է գալիս մյուս բեռնակիրների շարքից. նա որորվում է կրկնակի ծանր բեռան տակ:

Նվերների արկղը բաց են անում, Սահիբը նրա միջից հանում է մի փոքր ծրար:

— Այս ի՞նչ բան է:

Սահիբներն ամեն կողմից դիտում են կաշվե իրերը՝ փայլուն կոճակներով: Այդ իրերը նման են փոքրիկ կոշիկների, միայն այն տարբերությամբ, վոր դրանց տակը կլոր է և մեխեր կա խիած. ներսի մասն ամբողջովին թավջից է:

— Այս ի՞նչ բան է, — հարցնում են սահիբները:

Նվիրատուն ծիծաղում է: Նա կանչում է՝

— Ռեքս, մոտ արի՛:

Շունը վազում է նրա մոտ և բարձրացնում իր դունչը:

— Ռեքս, թաթդ տուր:

Ռեքսն առաջ է մեկնում իր թաթը: Սահիբը դիտում է շան թաթը:

— Խեղճ չնիկ, — ասում է նա. — սառույցը կտրատել է նրա բոլոր թաթիկները: Մի տխրի, Ռեքս, ահա քեզ համոր կոշիկներ: — Նա կոճկեց կոշիկները, վոր լավ էյին նստել շան թաթերին:

ԳՈՐԾԱԴՈՒԼ

Բեռնակիրները տեսան, թե ինչպես շան վոտերին կոշիկներ հագցրին: Սկզբում շունը թափ էր տալիս թաթիկները, հետո փորձում էր դնել դուրս հանել և ատամներով զզզվել, ասլա վեր էր թռչում տեղից և սկսում էր սառույցի վրա վազվզել: Բեռնակիրներն աչքերը դարձրին իրենց փետացած, արյունոտած

վոտքերին: Հանկարծ նրանցից մեկը շալակից վայր դրեց գրամաֆոնը և զայրացած ցած գլորեց լեռներից:

— Սահիբներ, — դռնեց մի այլ բեռնակիր, — դուք ինքներդ կրեք այդ իրերը:

Այս նրա արկղը դիպավ սառույցին, ապակին զնգաց և շիջերով դարե՛ջուրը ցած գլորվեց սառույցներից:

— Սահիբները տեսան թե ինչպես դեպի ցած է գլորվում գրամաֆենան:

Բեռնակիրները չըջապատեցին սահիբներին: Պրոֆեսոր Դիրենֆուրթը գրպանից հանեց ատրճառակը, բայց խսկույն յետ դրեց տեղը: Բեռնակիրները թվով 400 էյին, իսկ սահիբները՝ տասնհինգ: Բեռնակիրներն ավելի ուժեղ էյին:

ԱՅՈ, ԱՅԴ ՃԻՇՏ Ե

Սամին իր ընկերների հետ փորել էր մի յերկար անցք: Նրանք հետզհետե ավելի էյին խորանում ձյան մեջ, մինչև վոր հասնում են սառցե շերտին: Գործիքներով փորելն այլևս անհնարին էր:

— Ձեթան չկա, — ասաց Սամին: — Ստիպված ենք յետ դառնալու:

Նրանք դուրս են գալիս ձյան տակից և աստիճաններով բարձրանում յերկրորդ սանդղեմանդը:

Ձեթան մեռավ: Նրա կինը հրաժեշտի ժամանակ ասաց՝ «Ձեթա, չուտո՞վ կվերադառնաս»:

Այդ մասին էր մտածում Սամին, յերբ մազլցում էր սառցե աստիճանների վրա: Նրա վոտները ծալվում էյին, նա քաղցած էր և հոգնած:

Յերբ նրանք բարձրացան վերև, նստեցին հանգստանալու: Մինչդեռ Սամին անդադար մտածում էր Ձեթայի մասին: Նա խորհում էր չար սահիբների մասին, վորոնց պատճառով մահադավ Ձեթան:

— Դու չգիտե՞ս, արդյոք, — հարցրեց նա ընկերոջը, — ճի՞շտ է, վոր շատ-շատ հեռու մի քաղաքում, վորտեղ բազմաթիվ մեծ տներ կան, ապրում է մեր Մեծ պաշտպանը — ԼԵՆԻՆԻՆ:

— Ճի՞շտ է, վոր բոլոր սահիբները վախենում են Լենինից:

— Այո, ճիշտ է այդ, — ասաց ընկերը: — Սահիբները նրանից ավելի յեն սոսկում, քան կորրա ոճից: Նա ապրում է շատ հեռու քաղաքում: Այնքան հեռու, վոր այնտեղ չեն կարող հասնել նույնիսկ թռչունները:

«ԱՅԴ ԻՆՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ»

Մի սև համար եր ընկած ձյան վրա: Սամին բարձրացրեց
այն:

— Բեռնակիրներին մեկը կորցրել եր իր № 11 վզկապը:

Մի քանի քայլ հետո, կրկին գտան մի այլ վզկապ—№ 371—ը:
Հետո կրկին ու կրկին: Սկզբում Սամին բարձրացնում եր այդ
համարները, հետո դեն ե ձգում: Դրանք շատ, շատ եյին. յերեք
հարյուրից ել ավելի:

Սամին ընկերներից մեկը հեռացավ և սկսեց դիտել ձյան
վրա յեղած հետքերը:

— Տեսե՛ք թե ինչ,—բացականչեց նա.—հետքերն ուղղված
են դեպի յետ: Գուցե մենք և նրանք տարբեր կողմ ենք գնում:

Յերբ նրանք մի քիչ ել անցան ձորի միջով, տեսան սառույցի
վրա ընկած գրամաֆոնը: Գրամաֆոնը ջարդ ու փշուր եր յեղել:
Այն գրամաֆոնը, վորը սահիբներին զվարճություն եր պատճա-
ռում:

Քիչ հեռվում ձյան մեջ կիտվել եր իրերի մի կույտ. այդտեղ
կային ծալովի սեղաններ և մահճակալներ, ջրցաններ, աթոռներ,
հակեր և արկղներ:

— № 342,—նկատեց ջարդված արկղի վրա Սամին ընկերը:

№ 342—ը իմ համարն ե: Հապա ո՞ւր ե նրա միջի շոկոլադե:

Ձյան մեջ նրանք գտան մի քանի կտոր շոկոլադե. գտան նաև
շան բիսկվիտները, իսկ ջարդված չէրի մեջ՝ յերկու չիչ գինի:

Բեռնակիրները կերան և խմեցին այդ բոլորը, արկղներից
և աթոռներից սարքեցին մի մեծ խարույկ: Խարույկի շուրջը
սարքեցին ծալովի մահճակալներ և պառկեցին քնելու:

— Այս ի՞նչ ե նշանակում,—հարցնում եյին նրանք իրար:

ԼԵՌՆԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Սահիբների հետ մնացել եյին միայն 50 բեռնակիր: Մնա-
ցածները ձգել եյին իրերը և յետ դառել: Նրանք իրենց հետ տարել
եյին յերեք վրան և մի քանի արկղ կենսամթերքներ:

— Անե՛ծք ե այս,—ասում ե պրոֆեսոր Դիրենֆուրթը:—Յե-
թե միայն հնարավորություն լիներ այդ մասին հաղորդելու
Դարձիլինդ: Ոհ՛, յես նրանց մեկ-մեկ կգնդակահարեյի:

Սկզբում սահիբները մտադրվել եյին վերադառնալ, բայց
հետո փոխեցին իրենց մտադրությունը:

— Պետք ե անել վերջին փորձը, յեթե այդ չհաջողվի, յետ

կդառնանք: Առանց պաշարի և մի բուռն բեռնակիրներով չեր կա-
րելի հապաղել կաշենինդ լեռան սառցադաշտերում:

Սահիբների ուրախությունը մեծ եր, յերբ կրկին նրանց միա-
ցան Սամին և նրա ընկերները: Ելի մի տասնյակ բեռնակիրները
քիչ չեյին, յերբ չորս հարյուրից մնացել եյին միայն հիսունը:
Սամին լաց յեղավ: Յերբ նա իմացավ, վոր քաջերը պոկել եյին
վզկապները և յետ դառել, իսկ ինքը պետք ե վախկոտների հետ
չարունակե ծառայել սահիբներին,—բարկությունից լաց յեղավ:

— Ձգենք իրերը,—ասաց նա ընկերներին,—հասնենք նրանց,
վորոնք վերադառնում են Դարձիլինդ:

— Այդ անկարելի յե,—պատասխանեցին նրանք:

— Մենք թվով քիչ ենք. բացի այդ, առանց սննդի և վրանների
կմեռնենք ճանապարհին:

Սամին հիվանդանում ե. նա հիվանդանում ե լեռնային
հիվանդությամբ, վոր կոչվում ե «սառցադաշտային հոգնա-
ծություն»: Սամին քարշէր գալիս՝ կարծես քնի մեջ. նա չեր զգում
քաղց, վոչ մի բանի մասին չեր մտածում, նա չեր նկատում, թե
ինչպես սառցե բեկորները խրվում են նրա վտերի մեջ:

ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁ

— Դուք բոլորդ ել կմնաք այստեղ,—ասում ե սահիբներից
մեկը. յեթե մենք բոլորս չենք կարող բարձրանալ կաշենինդի
գագաթը, դեթ յես միայն կփորձեմ բարձրանալ:

Սամին տվին մեխով կոշիկները, ուսին դրին մի պայու-
սակ՝ կենսամթերքներով, դահուկներ և մի բարձ թթվածին: Նա
պետք ե ուղղեկցեր սահիբին: Նրանք ընթանում եյին շատ դան-
գաղ: Նրանք մինչև ուսերը խրվում եյին ձյան կույտերի մեջ.
աստիճաններ եյին փորում սառույցի մեջ, մազլցում եյին սառցե
քարաժայռերի վրա. դահուկներով խջում եյին բարձր գագա-
թափերից:

Անվերջ վեր—վար, վեր—վար:

Սամին համար միևնույն եր, թե ուր են գնում. նրա համար
միևնույն եր՝ կհասնե՞ն գագաթին, թե անդունդ կգլորվին: Նա մի
ցանկություն ուներ, վոր սահիբը թույլ տար նրան ընկնել ձյան
վրա և քնել: Վերջապես սահիբը կանգ ե պոնում. նա ասում ե
— Այդտեղ ե ամենահարմար տեղը. յեթե այստեղից ել յես
չկարողանամ բարձրանալ, պետք ե յետ դառնանք:

Սահիբն ու Սամին թթվածին են չնչում, վորպեսզի վերջին
անգամ ուժ ստանան վեր բարձրանալու: Հետո սկսում են աստիճան
ներ փորել սառույցի մեջ:

Չե,—ասում է սահիբը,—այստեղ գահավանդ ե. աստիճաններով անկարելի յե բարձրանալ: Փորձենք մեր գցել: Նա վերցրեց պարանի ծայրը, կապեց մի մեծ մերքե և սկսեց գցել վերև՝ վերջին սանդղեվանդի վրա: Նա կարծում եր, վոր մերքը կկառչի սառուցին:

Բայց պարանն անմիջապես ցած եր սահում: Սառցե պատի մեջ կար ճեղքվածք, վորը տարածվում եր մինչև սանդղեվանդի վերին ծայրը:

— Յեթե յես ձեռքի տակ ձողեր ունենայի,— ասաց Սահիբը,— յես այդ ճեղքվածքով անսլայման կբարձրանայի վերև և կաշնինդ լեռան ամենաբարձր քարածայուր կանվանեյի «պրոֆեսոր Դիրեն-ֆուլթի անվան քարածայուր»:

«ԴՈՒ ԿԱՊԻԿ ԵՍ»

Հանկարծ Սամին դառնում է դեպի Սահիբը և հարցնում՝

— Սահիբ, մի՞թե ամեն մի սար իր անունն ունի:

Սահիբը դեռ չոկոլադ եր ուտում:

— Վոչ,— պատասխանում է նա.— քանի դեռ սարի վրա մարդ չի բարձրացել, այդպիսի սարն անուն չունի: Այն մարդը, վորը առաջինն է բարձրանում սարի դազաթը, նա է անուն տալիս այդ սարին:

Սամին վրտի յե կանգնում:

— Սահիբ,— հարցնում է նա,— իսկ յեթե յես բարձրանամ, կարող եմ արդյոք անուն տալ սարին:

Սահիբը ծիծաղում է:

Դո՛ւ, կապիկ ես, դու յել կարող ես:

Սամի աչքերը փայլում են. նա ուզողում է իր մեջքը և ձեռքին պինդ բռնում դահուկի փայտերը:

Սահիբը հենց այն տեսավ, թե ինչպես բեռնակիրը մի ակընթորթում գցում է դահուկի փայտերը վերև՝ սանդղեվանդի վրա, ապա գցում է դահուկները, թթվածինով բարձր և մեջքի պայուսյակը:

— Ինչ ես անում, անպիտան, գոռում է սահիբը.

Բայց Սամին արդեն լեռան ճեղքվածքում եր: Նա իր մեջքը դեմ եր տվել ճեղքվածքի մի յեզրին և ձեռքերով, վրտերով, ծընկներով ու արմունկներով հենվում եր սառցե պատի մեջ յեղած ամեն մի փոքր ցցուն սառցակտորի:


Նա մոռացել եր իր հոգնածության մասին և մագլցում եր դեպի վեր, ինչպես մի մողես: Սամին նուսխակ յետ չը դառավ

նայելու սահիբին: Սամին բարձրանալով սանդղեվանդի վրա, մի քանի կում թթվածին շնչեց, վրտերին հագավ դահուկները, շաշակեց պայուսակը և տեղից շարժվեց:

ՍԱՐԻ ԱՆՈՒՆԸ

Ուժեղ քամին, հրելով Սամի մեջքին, առաջ եր մղում նրան. չոկոլադը լիւլիւկում եր մեջքի պայուսյակի մեջ, բայց Սամին մոռացել եր ուտելու մասին: Նա բարձրանում եր լեռան գագաթի ողջ լանջի վրա. դեպի վեր, վեր և վեր: Վորտեղ հնարավոր եր, նա քայլում եր դահուկներով. իսկ յեթե այդ անհնարին եր, դահուկները շալակում եր և այնպես առաջ գնում: Սամի այտերը գունատվել էյին ցրտից, ականջներից և քթից արյուն եր հոսում. սակայն Սամի աչքերը փայլում էյին, նա գնում եր առաջ և առաջ: Ահա այլևս տեղ չկա առաջ գնալու:

Արևմուտքում կարմիր արևն եր մայր մտնում: Դեպի ցած, վոր կողմն ել վոր նայես, սառցապատ դազաթներ էյին յերևում. նրանք շարվել են շղթաների և կատարների նման, վարդագույն չողն անցնում եր մեկ դազաթից մի այլ դազաթ: Ձյունե և սառցե



դաշտերը փայլում էյին լեռների կատարների միջև: Ահա վոսկեղոծ ամպերի ծով տարածության միջև սև կղզիների նման յերևում են սարերի դազաթները:

Ապա վորտեղ ե սահիբների ճամբարը:

Սամին շատ յերկար նայում եր դեպի ցած. ահա յերևում ե մի սև բիծ՝ սպիտակ ձյան վրա:

Սամի աչքերից առատ արտասուքներ են թափվում: Նա լաց ե լինում ուրախությունից: Նա կանգնած ե Կաչենինդ սարի ամենաբարձր գագաթին:

Նա առաջինն ե բարձրացել այդ սարի գագաթը. նա կարող ե անուն տալ այդ սարին: Սամին նայում ե դեպի ցած, վորտեղ ուսիբների ճամբարն ե գտնվում:

— Սահիբներ,— դռնում ե Սամին,— յես եմ անուն տալիս այս սարին: Յես այս սարին տալիս եմ Լեճնի անունը:

Սահիբներ, լսո՛ւմ եք արդյոք. մեր Մեծ պաշտպանի անունը—ԼԵՆՆԻ:



Վ. Բ. ԿԱՊԱՆԻՍԵՐ

Տպված ե պեխի լիճի

1. 13-րդ հի վեր. հերթ. 5-րդ տող շուրջը—շուրջը
2. 14-րդ » » » » » մեկ—մերկ
3. 16-րդ » » » 16-րդ » Չոր հարկանի—Չորս հարկանի
4. 25-րդ » հերթ. վեր. 15-րդ » պետք ե ուղղեկցեր—պետք ե ուղղեկցեր
5. 26-րդ » վեր. հերթ. 2-րդ » մեր գցել—մեր գցել
6. » » հերթ. վեր. 10-րդ » ակնթերթում—ակնթարթում

ՀՀ Ազգային գրադարան



NL0395096

4110' 50 4.

mb1
gr1

2966

45

М. ГЕРШЕНЗОН

ГОРА ЛЕННИ

Госиздат ССР Армении
Эривань 1934 г.

